3354

215
7-49

Ամ-1
Ամ-1

23 SEP 2008

Ս. Մ. ԴԻՄԱՆՇՏԵՅՆ

ՀԱԿԱԿՐՈՆԱԿԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔԸ ԱԶԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՋ

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿ. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՄՈՍԿՎԱ
1930

215
Ռ-49

573

Ս. Մ. ԴԻՄԱՆՇՏԵՅՆ

ՀԱԿԱԿՐՈՆԱԿԱՆ ԱԹԽԱՏԱՆՔԸ ԱՋԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՋ

ՅՍՀՄ ԺՈՂՈՎՈՒՐԴՆ. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՄՈՍԿՎԱ
1930

16.05.2013

3354

305
1930

Главлит № А-59346 Тираж 3000

Кн. ф-ка Центриздата народов СССР. Москва Шлюзовая набережная, д. 10

4639-КУ

ՀԱԿԱԿՐՈՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆ ԱԶԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՋ*

ԱՐԵՎԵԼՔԻ ԿՐՈՆՆԵՐԸ

Իմ զեկուցման մեջ յես կանգ պիտի առնեմ կրոնի հարցի վրա ազգային հանրապետություններում ու շրջաններում։ Զեկուցումս պիտի շոշափի մի ամբողջ շարք կրոններ, սակայն յես չեմ կարող կանգ առնել յուրաքանչյուր առանձին կրոնի վրա և պիտի խոսեմ միայն հիմնական մոմենտների մասին։

Կրոնի ընդհանուր բնույթը—դա նրա դասակարգային եյությունն է, բայց այնուամենայնիվ մենք գիտենք, վոր կրոնը հարմարվում է յուրաքանչյուր ժողովրդին, հատուկ պայմաններին ու հանգամանքներին։ Վոչ մի դեպքում չի կարելի խոսել ինչվոր՝ ամենուրեք միատեսակ կրոնի մասին։ Ինչպես գիտեք, դեռ ևս Մարքսն է գրել, վոր յուրաքանչյուր կրոն ապրում է շնորհիվ միայն այն հանգամանքի, վոր ապրում է այդ կրոնն ստեղծող ժողովուրդը։

* Զեկուցում ԽՍՀ Միության Մարանչող Անասավածների Համամիութենական 2-րդ Համագումարին։

գեց նրան, վոր ինքնակալությունը խրախուսում եր ժողովրդական մթությունն ու տգիտությունն, իսկ դա՝ իր հերթին առաջ բերեց կրոնը պաշտպանելու կարիքը։

Դուք լավ գիտեք, վոր կրոնը՝ պանիսլամականության կամ մի այլ ձև կրելով մի շարժում է ստեղծել, վոր ազգային ընույթ է ընդունել և գաղութանվաճ քաղաքականության ձևերի դեմ բողոքի բնավորություն է ունեցել։ Բայց միևնույն ժամանակ, կրոնը հարմարվել է ցարական ռեժիմին ու ամեն կերպ պաշտպանել է գոյություն ունեցող իրավակարգը։ Ամեն մի կրոնի հիմունքը՝ ուժեղին թույլի դեմ ու իշխող դասակարգերի պաշտպանման մեջ է կայանում։ Կրոնի այդ հատկանիշները գերակշռել են այն գծերի նկատմամբ, վորոնցով նա կապված է յեղել ազգային ազատագրական շարժման հետ։ Դա վերածվել է իշխանությանը յենթակայելուն, հնազանդվելուն ու նրա հետ հաշտվելուն։ Դուք գիտեք, վոր կրոնը նվաճողական կոպիտ ուժի հետ դաշնակցած՝ խոշոր դեր է կատարել յերկրի նվաճման ու գաղութակալման գործում։

ԿՐՈՆՆ ՈՒ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԸ

Բայց, յեթե մենք անցնենք այն հարցին, թե ինչ չափով նույնանիշ են ազգն ու կրոնը, ինչպիսի ձգտում ունեն կրոնի բոլոր ներկայացուցիչները, այդ դեպքում կտեսնենք, վոր այդ տարրերը չեն զուգադիպվում հենց պարզապես միայն այն պատճառով, վոր ամեն

մի կրոն բավական բազմազան ազգություններ է ընդգրկում։ Վերցրեք, իբր որինակ, մուսուլմանականությունը. այդ կրոնի հետևորդների թվում գտնվում են մի ամբողջ շարք ազգություններ։

Յեթե այդ կրոնն ավելի խորը հետախուզելու լինիք, կտեսնեք, վոր՝ նույնիսկ կրոնական իմաստով՝ բավական խոշոր տարբերություններ գոյություն ունեն այդ ազգությունների միջև։

Ամեն մի շրջանում ամեն մի ժողովուրդ յուրահատուկ կերպով է ըմբռնում կրոնն, իսկ վերջինս հարմարվում է բնակչության կենսական ձևերին։ Ազգ ու կրոն իրար հետ չեն զուգադիպվում։ Իշխող դասակարգերի ու բարձրագույն հոգևորականության կողմից անկասկած խաբեբայություն է, յերբ նրանք կրոնն ու ազգությունը նույնացնում են։ Այդ մոմենտը մենք պիտի կտրականորեն դիմակազերծ անենք ու պարզաբանենք ժողովրդական լայն զանգվածներին։

Հոկտեմբերյան հեղափոխության սկզբում, յերբ մենք ազգային հանրապետություններում խորհրդային հասարակակարգ եյինք հաստատում, հակակրոնական ճակատում աշխատելիս խոշոր դժվարությունների եյինք հանդիպում. այստեղ ազգային մոմենտը գլխավոր դեր է խաղում։ Բանը նրանումն է, վոր ազգային հանրապետությունների մեծագույն մասում պրոլետարիատ գոյություն չի ունեցել, չի յեղել վոչ արդյունաբերություն և վոչ էլ պրոլետարական շարժում.

կոմունիստ բոլշևիկներին միավորներով կարելի էր հաշվել։ Դա խիստ դժվարացնում էր մեր դրությունը և մենք չէինք կարողանում հակակրոնական պայքարի մասին լուրջ կերպով հարց դնել։ Միտքս պատկերավորելու համար ցանկանում եմ իմ աշխատանքի փորձից մի միջադեպ պատմել, որ վառ լույս է սփռում այն փաստի վրա, թե որքան դժվարին է յեղել մեր աշխատանքն Արևելքում։ Ցես Բուխարայում լիազոր ներկայացուցիչ էի. մի կոմունիստի ցանկանում էին կուսակցությունից հանել միայն շնորհիվ այն հանգամանքի, որ նա դատարանում (այնտեղ դատարանը խորհրդային էր) ասել էր, թե աստծուն չի հավատում։ Դա ցույց է տալիս, թե որքան զգույշ և որքան անվճռականորեն են մոտեցել Արևելքում կրոնի հարցին։ Կարծել են, որ մի մարդ, յեթե իրեն անհավատ է կոչում հասարակության ներկայությամբ, ապա դրանով նա նսեմացնում է կոմունիստների վարկը և վերջիններիս նկատմամբ կարող են վերաբերվել, ինչպես անաստվածների։ Դա կրոնի հարցերում անտարբեր վերաբերմունքի ամենածայրահեղ մի արտահայտություն էր։ Բայց Արևելքում մեր ազդեցության աճման, մեր ու մեր թշնամիների գործունեության աճման ու կրոնական շարժումների զարգացման հետ միասին, սկիզբ դրինք հակակրոնական աշխատանքին։

Մենք պետք է ձգտեինք, մի կողմից՝ դեն չհրել հավատացողներին մեզնից, իսկ մյուս կողմից՝ մերկացնել կրոնն ու հայտնաբերել նրա դասակարգային էությունը։ Մենք սկսեցինք հակակրոնական աշխատանքը տանել ավելի խորն ու ավելի շատ։ Իհարկե, չի կարելի համեմատել այն, ինչ հեղափոխական իրականության պայմաններում յեղել է տարիներ առաջ և այն, ինչ կա այժմ։ Դուք գիտեք, որ հեղափոխական յուրաքանչյուր մի տարի կարող է համեմատվել սովորական «վոչ-հեղափոխական» մի քանի տարվա հետ։ Հասկանալի է, որ պայմանները հետզհետե ավելի ու ավելի վճռական արշավանք են պահանջում կրոնական մարտաճակատում։ Ստեղծվում են անաստվածների միություններ ու հակակրոնականների կադր, ժողովրդական զանգվածներում տրամադրություն է ստեղծվում և այլն։ Մենք կարող ենք ասել, որ հակակրոնական աշխատանքի ասպարիզում մենք խոշոր հառաջադիմական քայլեր ունենք արևելյան քաղաքներում, բայց դրությունը բնավ նույնը չե «ազգային» գյուղում։

Ցես նորից պիտի նկատեմ, որ դա, իհարկե, ավելի շատ վերաբերում է Անդրկովկասին, Ադրբեջանին և այլն։ Այնպիսի վայրերում, ինչպիսին Բաշկիրիան է կամ Թաթարական հանրապետությունը, դրությունն ավելի լավ է։ Խոսքս վերաբերում է ավելի հեռավոր ազգային հանրապետություններին։ Արևելյան շրջան-

ներում մեր աշխատանքի ծանրության կենտրոնը գյուղ պիտի տեղափոխենք։ Տեղերում ամեն կերպ մենք պիտի աշխատենք կազմակերպել անասուածների բջիջներ, որպեսզի անասուածները գյուղերում ու ղշլաղներում մեր շուշափուկները լինեն։

Ներկայումս մենք արդեն ունենք խորհրդային կուսակցական դպրոցներ անցած կամ յոթնամյա դրպրոցներ ավարտած բանվորների կադրեր, ովքանք էլ սովորել են կոմունիստական բարձրագույն դպրոցներում և այլն։ Մի խոսքով, կադրեր ունենք, որոնք աշխատել են։ Բայց ականատես ենք և անհավանական յերևույթների՝ խորհրդային իշխանության որոք յերիտասարդության մի մասը սովորել է կրոնական դպրոցներում։ Այդ դպրոցները դեռ ևս շատ տեղերում գոյություն ունեն, չնայած որ նրանց վերացման մասին որոշում կա։ Այդ դպրոցները սկսում են անհետանալ ու նրանց տեղը գրավում է խորհրդային դպրոցը։

Յեթե առաջ մոլլան իրավունք ուներ ծեծի յենթարկել նրան, ով չեր աղոթում, այժմ այդ գոյություն չունի։ Հիմա մոլլան զգում է, որ նրա վրա արշավում են. բայց մենք ևս զգում ենք, որ թշնամական ճակատում սրվում է պայքարը։ Մենք տեսնում ենք, որ հոգևորականությունն աշխատում է իր գրաված դիրքերում պահպանել իր հավասարակշռությունը և մեծ ազդեցություն ունի Արևելքի կանանց վրա։

Դուք գիտեք, որ Արևելքի կինը առհասարակ կեղեքված է յեղել։ Արևելքի քողապատ (չադրայի տակ) կինը բոլորովին դիմազուրկ է յեղել, նա համարվել է մի առարկա, գնված մի իր ու գանվել է ամուսնու կամ ծնողների ազդեցության տակ և այլն։ Այդ փաստն, իհարկե, ամրացնում է մեր թշնամիների ու մեր հակառակորդների դիրքերը։ Նրանք այժմ կրոնական մոլեռանդության իմաստով զիջումներ են անում, ովքանք կանանց սկսում են մզկիթ թողնել ու ամենայն արտոնություններ տալ, որպեսզի կարողանան նրանց պահպանել կրոնի ու մոլլայի ազդեցության տակ ու ամրապնդել իրենց դիրքերը։

Բացի դրանից, այս ու այն տեղ աղանդներ (սեկտաներ) են սկսում առաջանալ։ Դուք գիտեք, որ Բեխաիստներն աշխատում են իրենց ազատախոհ (լիբերալ) ձևացնել։ Նրանք հարմարվում են բոլոր պայմաններին ու համապատասխան արտաքին տեսք տալիս իրենց գործունեությանը։

Յեթե կարդայիք սպիտակ եմիգրանտների արևելյան գրականությունն, ապա կտեսնեյիք, որ նրանք իրենց հույսը հենց կրոնական կազմակերպությունների վրա յեն դնում։ Նրանք բացահայտ կերպով արտահայտվում են խորհրդային իշխանության դեմ, բացարձակորեն ասում են, որ ձգտում են խորհրդային հասարակակարգը յենթարկել իմպերիալիստների, անգլիացիների ազդեցությանը և այլն։

Նրանք այդ մասին բացահայտ կերպով խոսելուց չեն քաշվում. նրանք ջանք են թափում հարմարվել ու առաջ են քաշում՝ իբրև հիմնական մոմենտներից մեկը՝ կրոնի բարենորոգությունը, վորպեսզի կարողանան մասսաները միաձուլել ու, դրա շնորհիվ, ամրանալ հին դիրքերում։ Նրանք գիտեն, վոր կրոնի հին ձևը կենսական հին ձևերին է միայն հարմարված, բայց վորովհետև կրոնի հին ձևն անբավարար է՝ ուստի և նրանք պիտի հարմարվեն այնպես, ինչպես այդ արել է կրոնը դարերի ընթացքում։ Կրոնն աստիճանաբար պիտի մեռնի կամ անհետանա, մանավանդ վոր կոմունիստական կուսակցության ու կոմյերիտական ամբողջ աշխատանքը տարվում է հակակրոնական պայքարի վոգով։ Այդ պատճառով էլ մեր բոլոր թշնամիները յելակետ են վորոնում կրոնի բարենորոգման մեջ։ Վոմանք ասում են, վոր նրանք հառաջադիմական (պրոգրեսիվ) կրոն են մտցնում Արևելք, սակայն վոչ մի հառաջադիմության մասին խոսք լինել չի կարող, վորովհետև այդտեղ տեղի ունի միայն հոգուտ կապիտալիստական տարրերի պահպանման ու խորհրդային իշխանության դեմ կռվելու համար ավելի լավ հարմարվելու ձգտում։

Ինչ կոնկրետ առաջարկություններ ենք մենք մտցնում աշխատանքի այն բարենորոգությունների իմաստով, վորոնք այժմ անհրաժեշտ են։ Նախ՝ անհրաժեշտ է պրոպագանդիստական ու կազմակերպչական

աշխատանք և լուսավորական աշխատանքի ուժգնացում։ Այժմ Արևելքում հակակրոնական մասսայական շարժման մասին հարցն այսպես պետք է դնել։ Մեզ մոտ այդ աշխատանքը դեռ ևս չի տարվում, գործը միայն սաղմնային վիճակում է։ Մենք ամեն կերպ պիտի ջանանք, վոր Անասավածների Միությունն ավելի մերձավոր մասնակցություն ունենա այն պատերազմում, վոր մղվում է այժմ Արևելքում հոգուտ կանանց ճորտային վիճակի վերացման։ Դա յուրահատուկ մի պատերազմ պիտի համարել։ Դուք գիտեք, վոր կանայք այդ հողի վրա հարյուրավոր սպանվածներ են տվել. դուք գիտեք, վոր շատ մեծ յերկպառակություններ են տեղի ունենում և մենք, վորպեսզի կարողանանք կրոնը զրկել իր հենարանից, պիտի ազդենք կանանց վրա, վերջ տանք նրանց ճորտային վիճակին, վորովհետև կինն ազդում է յերեխաների, դպրոցի վրա և այլն։ Կինը պիտի մուտք ունենա արդյունագործություն ու նոր տնտեսություն։ Մեր աշխատանքն Արևելքում մենք պիտի կապենք կնոջ ազատագրման հարցի հետ, վորովհետև դա կոնկրետ բարենորոգման հարց է։

Ինչ վերաբերում է չադրայի հարցին, պիտի ասել, վոր այստեղ պայքար պիտի մղենք նույն դրոշի տակ։ Ցեսս կարծում եմ, վոր հարկավոր է մեզ այդ գործին անցնել ամենահամառ կերպով։

ԱՆԱՍՏՎԱԾՆԵՐԻ ԿԱԴՐԵՐՆ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ

Արևելքում մենք նեղվում ենք շնորհիվ անաստվածների իսկական կադրերի բացակայության։ Ցես հարց չեմ դնում նեղ մասնագետների կադրերի մասին, վորոնք կարող կլինեին մոլլաների հետ բանավեճ սարքել. այստեղ չի գտնվում ծանրության կենտրոնը։ Հարցը վերաբերում է փորձված մարքսիստ ընկերներ ունենալու անհրաժեշտությանը. ընկերներ, վորոնք հասկանային կրոնի պատմությունն ու իմանային իսլամի պատմությունը։

Մենք պիտի ունենանք այնպիսի գործիչների կադր, վորոնք կարողանային Արևելքում ընդդիմանալ բոլոր թշնամի տարրերին, ընդդիմանալ բոլոր հավատացողներին։ Պետք է ամեն կերպ վոչնչացնել հոգևորականության տնտեսական հիմքն, իսկ այդ չի կարելի վոչնչացնել մեն-միայն դեկրետներով։ Հասկանալի յե, մենք պիտի աշխատենք հնարավորություն չտալ մոլլաներին ժողովել իրենց կրոնական հարկերը. մի բան, վոր հակասում է որենքին։ Արևելքում մենք պիտի հետևենք նույնպես, վոր պետության զատումը յեկեղեցուց կատարվի որենքի հիման վրա։ Դրա համար մենք արդեն լիակատար հնարավորություն ունենք։

Բայց դա քիչ է. գոյություն ունեն հազար ու մի զանազան կամավոր մասնատվություններ ու կամավոր նվիրատվություններ և հազար ու մի միջոցներ, վոր գործադրվում են հոգևորական նեղ շահադետ

խմբի կողմից։ Վորպեսզի կարողանանք ջլատել հոգևորականության տնտեսական հիմքն, անհրաժեշտ է ունենալ գործոն աշխատողներ, ընդունակ ապացուցելու ու պարզաբանելու, վոր այն միջոցները, վորոնք զանազան հանրապետություններում տասնյակ հազարներով վատնվում են հոգևորականության վրա, յեթե ծախսվեին կուլտուրական ու լուսավորական նպատակներով, խոշոր հետևանքների կարելի կլիներ հասնել. ընդունակ պարզելու, վոր ազգային հանրապետություններում կուլտուրական հեղափոխության հարցն իր ամբողջ հսկայական ծավալով դեռ չի լուծված։ Դուք գիտեք, վոր Արևելքի բնակչության 90 տոկոսն անգրագետ է։

Յեթե բնակչության ամբողջ յեռանդն ու բոլոր հնարավորությունները կարողանայինք ուղղել դեպի պայքար այդ ճակատում և հակադրել հոգևորականությանն ու տգիտությանը, դա խոշոր ոգուտ կբերեր մեզ։ Ոգտակար կլիներ, յեթե Անաստվածների Միությունը մասնակցեր թյուրքական նոր այբուբենի համար մղվող պայքարին. դա մեծ նշանակություն կարող եր ունենալ։ Լատինական այբուբեն մտցնելու մասին բոլոր հանրապետություններում արդեն հատուկ վորոշում կա և դրան խիստ դիմադրում է հենց հոգևորականությունը, վորը չի կարողանում հաշտվել այն մտքի հետ, վոր արաբական գրերով գրված սուրբ գրվածքը՝ Ղորանը՝ հասկանալի չի լինելու գրագետին։

Նա վախենում է, որ հավատացյալները նոր թյուրքական այբուբենի վրա սովորելով, Ղուրանից պիտի կտրվեն։ Այսպիսով, լատինական այբուբենին անցնելու հանգամանքը կրոնի դեմ պայքարելու յեղանակներից մեկն է։ Ցես չեմ կասկածում, որ որոշ ժամանակաշրջանից հետո հոգևորականությունն էլ պիտի նոր այբուբենն ընդունի։ Ցես կարծում եմ, որ հենց ինքը թյուրքական նոր այբուբենն Արևելքի անասունների համար պայքարի կոնկրետ մի յեղանակ է հանդիսանում։ Մենք պետք է պատրաստենք այնպիսի աշխատողների կադր, որոնք կարող լինեին ոգտագործել բոլոր հնարավորությունները։

Մեզ մոտ գործը մամուլի նկատմամբ վատ վիճակում է գտնվում։ Արևելյան հանրապետություններում հակակրոնական շատ քիչ թերթեր ու հանդեսներ ունենք։ Մեր առաջ դրված է՝ մամուլը մասսաների կարիքներին հարմարելու խնդիրը։ Հարկավոր է, որ բավականաչափ պարզ հայտնի լինի, թե ում և ինչ է անհրաժեշտ տալ։ Դուք գիտեք, որ կան մուսուլման կրոնական հանդեսներ, գոյություն ունի «Իսլամ» հանդեսը, որ որոշ չափով տարածվում է ազգային հանրապետություններում և մենք նրան անբավարար դիմադրություն ենք ցույց տալիս։ Մենք մասսայական հանդեսներ չունենք։ Մենք պիտի հարց բարձրացնենք ազգային հանրապետությունների ու շրջանների համար թերթերի մասին։ Դա, անկասկած,

բոլորովին անհետաձգելի մի հարց է հանդիսանում։

Մի փորձանք էլ կա, ընկերներ։ Ազգային ընդհանուր մամուլում բավարար չափով ուշադրությունը դեպի հակակրոնական հարցը բացակայում է։ Այդ հարցի նկատմամբ նախկին տարիներում չափից դուրս ավելորդ զգուշություն եր նկատվում. և դա հասկանալի յեր։ Բայց ներկայումս չի կարելի սահմանափակվել հակակրոնական միայն մասնակի գրականությամբ։ Անհրաժեշտ է, որ հակակրոնական գրականությունը լինի ամենուրեք և ամեն տեղ, որ առորյա մամուլը, յուրաքանչյուր հանդես և յուրաքանչյուր թերթ՝ իր վոչ բազմաթիվ քանակով, որ հատուկ է արևելյան մամուլին՝ բավարար չափով լուսաբանե հակակրոնական աշխատանքը։ Անհրաժեշտ է որ այդ աշխատանքը վորոշ տեղ գրավե, որպեսզի մեզ մոտ ամենուրեք ագիտացիա մղվի հակակրոնական աշխատանքի նկատմամբ։ Դրանով պիտի զբաղվեն վոչ միայն հատկապես հակակրոնական աշխատանք վարողները, այլ և անհրաժեշտ է հակակրոնական աշխատանքն արմատացնել կոմունիստական, կոմյերիտական ու արհեստակցական միությունների մամուլում և ամեն տեսակի աշխատանքներում։

ԲՈՒԴԴԱ-ՑԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՑԵՎԼԱՄԱ-ՑԻՉՐԸ

Ցես այլ ևս չեմ կարող կանգ առնել Արևելքի հարցի վրա, որովհետև քիչ ժամանակ է մնում և պիտի անցնեմ ուրիշ ժողովուրդներին ու գրողներին։ Մեզ մոտ

2—1766
ИНСТИТУТ ЛЕНИНА
ՍՍՀ-ՇՈՒՐ
4639-84

կան ժողովուրդներ, որոնք բուդդայականություն, լամայիզմ են դավանում։ Դրանք բուրյատ-մոնղոլներն են, կալմըկները և այլն։ Դուք գիտեք, որ այդ կրոնն ավելի շատ, քան որևէ մի այլ կրոն՝ կարողանում է հարմարվել ու կապվել մասսաների հետ։ Այդ կրոնն յուրահատուկ ստորադաս մի կրոն է հանդիսանում։ Հենց այդ ժողովուրդները, որ առանձնապես ուժեղ դասակարգային շերտավորում չեն ունեցել, կարողացել են այնպիսի պայմաններ ստեղծել, որ բնակչության ահագին մեծամասնությունը գտնվել է դացաններում՝ լամայիստների դըպրոցական հիմնարկություններում։ Ամբողջ գրագետ բնակչությունն ու հասարակական միտքը կապված է յեղել դացանների հետ։ Նրանք կռիվ են մղել ազգային հողի վրա, պայքարել են ինքնակալության դեմ և ավելի՝ այսպես կոչված՝ յերախտիքներ ունեն, քան՝ որինակ՝ մուսուլման մոլլաները։ Այդ հանգամանքը նրանց կողմից խիստ ոգտագործվում է։

Լամայիզմը մի կրոն է, որ կարողացել է լավ հարմարվել և, որովհետև այժմ բավական արագ փոխվում են պայմանները, մենք լամայիստ-բուդդայականների մեջ մի շարք բեկվածքներ ենք տեսնում, որոնք պայքարում են իրար դեմ։ Կան պահպանողականներ, նորացման կողմնակիցներ (обновленцы) և այլն, որոնք մեծ աշխատանք են կատարում, որպեսզի բնակչության զանազան շերտերին տարբեր

յեղանակով մերձենան, որպեսզի՝ որինակ՝ ոգտագործեն մտավորականությունը և այլն։ Նրանք գործին ավելի պարզ են մոտենում, քան այլ կրոնները։ Այդ պատճառով նրանց դեմ կռվելն ավելի դժվարին է։ Նրանք խոր արմատներ են ձգել ու մեծ տարածում ունեն։

Ցեսս կարծում եմ, որ մենք, անշուշտ, պետք է գործադրենք կռվելու հենց միևնույն յեղանակները, որոնք ձեր հավանությանն եմ առաջարկում Արևելքի համար. սակայն, հասկանալի յե, այստեղ մենք պիտի ստեղծենք ավելի մասսայական գրականություն. այստեղ հակակրոնական պայքարի ճակատում մինչև այժմ դեռ ևս շատ քիչ գրականություն ունենք։ Շատ քիչ միջոցներ են ձեռք առնվում, որպեսզի բավականաչափ լավ հաշվի առնվեն լամայիզմի առանձնահատկությունները։ Լամայիզմին լավ ծանոթ հակակրոնականներ մենք չունենք, մինչդեռ մենք ունենք բավական ուժեղ և ունակ հակառակորդներ։

Դուք գիտեք, որ լամայիզմն արտասահմանի հետ ավելի ուժեղ է կապված, քան մուսուլման կրոնը։ Մուսուլմանականությունը կապված է Պարսկաստանի ու Թյուրքիայի հետ։ Դա այնքան էլ կենդանի կապ չէ, որովհետև այստեղ տարբեր ազգեր են ապրում։ Բայց այլ կերպ է դրությունը բուրյատ-մոնղոլների նկատմամբ, որոնք լամայիզմի գծով մեծ ու սերտ

կապ ունեն սահմանից դուրս գտնվող բուրյատների ու մոնղոլների հետ։

Ցես կարծում եմ, վոր պետք է հարց դնել պատրաստելու կատարելապես զրագետ ու լավ հակակրոնականներ, վորոնք կարողանային դիմադրել՝ բավական խոշոր հեղինակություն վայելող լամաներին ու ուսումնական կրոնավորներին։

Այսպիսով, այստեղ ևս ծագում է պարբերական մամուլի զարգացման խնդիրը. այնուհետև անհրաժեշտ է դասագրքեր կազմել, աշխատողների համապատասխան կադր պատրաստել և այլն։

ՀՈՒԴԱՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ (ՄՈՎՍԵՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ)

Անցնենք հրեական կրոնին, ավելի ճիշտ՝ հուդայականությանը։ Դուք գիտեք, վոր հրեաներ ասելով մենք ազգ ենք հասկանում, իսկ հուդայական կոչվում է հրեական կրոնը։ Դուք գիտեք, վոր հրեաների դրությունը խիստ յուրահատուկ է։ Մի քանի հազարամյակ նրանք ապրել են հատուկ պայմաններում ու ամենից ավելի նրանց միացրել է կրոնական հոդը։ Նրանք ցրված են բազմաթիվ յերկրներում։ Չնայած վոր հրեաները վոչ մի առանձին տերիտորիա կամ կյանքի առանձին պայմաններ չեն ունեցել, նրանք պահպանվել են մինչև այժմ։ Պահպանվել են նրանք շնորհիվ միայն այն հանգամանքի, վոր ունեցել են առանձնահատուկ կրոնական վիճակ։ Բացի այդ, միացրել են նրանց և հալածանքները։

Հրեական բնակչության վորոշ ներփակված կենցաղը հրեաներին կրոնի շուրջն է համախմբել։

Դարերի ընթացքում կրոնը շատ մարտիրոսներ է ունեցել։ Ցես կանգ չպիտի առնեմ պատմական կողմի վրա և պիտի խոսեմ այդ հարցին վերաբերող այն խնդիրների մասին, վորոնք դրված են մեր առաջ Խ.Ս.Հ.Միության սահմաններում։

Ցես պիտի մատնանշեմ, վոր հրեա բանվորների մեջ համարյա հավատացողներ չկան։ Բոլոր հավատացողները կամ տնայնագործներից են կամ չքավոր տարրից։ Հրեական բուրժուազիան բավական հաջող կարողանում է պահպանել իր ազդեցությունը յեռատիպ մասսաների վրա, ըստ վորում ոգտվում է հատուկ յեղանակներով, վորոնք մասամբ գործ են ածվում և ուրիշ կրոնների կողմից, միայն վոչ նույն չափով։ Ցես նկատի ունեմ ամեն տեսակի մարդասիրական գործերը (ֆիլանտրոպիա), կազմակերպչական ոժանդակությունը հրեական քաղաքացիական ու կրոնական համայնքների կողմից և այլն։ Արտասահմանյան հրեաները ճիշտ նույնպես ունեն միամբողջ շարք կազմակերպություններ, ըստ վորում բավական խոշոր ու բարդ, վորոնք արտաքուստ ունեն վոչ-կրոնական, ազգային բնույթ։ Այդ կազմակերպությունները ամեն կերպ աշխատում են ազգային մոմենտները կապել կրոնական մոմենտների հետ։

Մենք պետք է մերկացնենք այդ ուղղությունը, որպեսզի հրեական չքավորությունն ու հրեական մասսաներն ազատենք կրոնի լծից և այն վիճակից, ուր այժմ նրանք գտնվում են։ Մեր տրամադրության տակ գտնվող միջոցներն ու, մանավանդ, հրեաներին հողի վրա ամրացնելը, կարևոր չափով նպաստում են հակակրոնական պայքարին, բայց յես պիտի ասեմ, որ մեզ տրամադրված հնարավորություններին ու գոյություն ունեցող կադրերին համապատասխան պայքար չի մղվում։ Պետք է խոստովանել, որ այդ աշխատանքը հրեաների միջև չի դրված այն բարձրության վրա, ուր նա կարող է և պետք է լինի։

Յես ցանկանում եմ կանգ առնել անտիսեմիտիզմի (հրեայատեցություն) վրա։ Դուք լավ գիտեք, որ հրեաներին հալածելը շարունակվում է։ Կարծում եմ, որ մեզ՝ անաստված մարտաճակատի աշխատողներիս համար անտիսեմիտիզմի հարցը պիտի առանձին տեղ գրավի։ Մենք գիտենք, որ ամեն մի յեռաշրջում (ռեակցիա), խորհրդային իշխանության դեմ ուղղված յուրաքանչյուր մի յելույթ, հազվագյուտ դեպքում միայն չի կապվում անտիսեմիտիզմի հետ։ Այդ պատճառով մեր աշխատանքի ընթացքում անտիսեմիտիզմի դեմ պայքարելու հարցը պիտի հատկապես ընդգծվի, առաջ քաշվի։ Մենք չենք կարող ծավալուն աշխատանք տանել հակակրոնական կռվի ասպարիզում առանց պայքարելու անտիսեմիտների ու այն հոգեբանության դեմ, որ ստեղծում են նրանք, այն առարկությունների դեմ, որոնք նրանք առաջ են մղում, և այն գաղափարախոսության դեմ, որով նրանք գոտեպնդվում են, որովհետև նրանք հաճախ իրենց գաղափարախոսությունը կապում են ազգերի միջև գոյություն ունեցող խորությունների ու կրոնի հետ։

Դուք գիտեք, որ անտիսեմիտիզմի արմատները կրոնի մեջ են գտնվում։ Անհրաժեշտ է հարց դնել միջազգային վոգով դաստիարակման մասին։ Մենք չենք կարող ճիշտ ուղղություն ունենալ հակակրոնական պայքարում, յեթե միաժամանակ չպայքարենք հոգուտ ժողովուրդների միջազգային շարժման։ Արևելքում կռիվ է մղվում իսլամի դեմ, մինչդեռ մի շարք վայրերում համանման պայքար չկա կամ թույլ է։ Վոմանց մոտ տպավորություն է ստեղծվում, որ միայն մի կրոնի դեմ ուղղված նմանորինակ պայքարը խորություն է դնում։ Անհրաժեշտ է նույն չափով պայքարել բոլոր կրոնների դեմ և խախտել հավատը դեպի բոլոր աստվածները։

Այսպիսով, մեր աշխատանքի կարևորագույն պայմաններից մեկն է հանդիսանում միջազգայնականության մոմենտը կրոնի և անտիսեմիտիզմի դեմ մղվող պայքարի մեջ։ Անհրաժեշտ է պայքարել բոլոր կրոնների դեմ։

ԿԱԹՈԼԻԿՈՒԹՅՈՒՆ

Ցեսս ցանկանում եմ անցնել կաթոլիկության դեմ պայքարելու հարցին։ Կաթոլիկությունը մեզ մոտ գործնեության վորոշ ասպարեզ ունի։ Կաթոլիկ բնակչության թիվը մեզ մոտ մի միլիոնի յե հասնում։ Ցեսս յերկար կանգ չեմ առնի այդ կրոնի վրա և պիտի խոսեմ հիմնական խնդիրների մասին։

Մենք գիտենք, վոր դարերից ի վեր կաթոլիկները կարողացել են արտաքին միջոցներով ներգործել մասսայի վրա։ Այդ կրոնը մինչև այժմ պահպանում է իր վորոշ վարկը։ Այստեղ նկատվում է անդրսահմանյան ազդեցությունը։ Կայոնձները բավական հաճախ՝ սպիտակ Լեհաստանի գործակալներն են հանդիսանում և իրենց տրամադրության տակ բավական ուժեղ ապարատ ունեն։

Կաթոլիկական կազմակերպությունները խիստ ճյուղավորված են ու հաջող կերպով հարմարվում են պայմաններին։ Այստեղ մենք պիտի ձեռք առնենք բոլոր միջոցները, վորպեսզի ոժանդակենք այդ աշխատանքում մեր լեհ ընկերներին։ Հետաքրքիր մի յերևույթ պիտի համարել, վոր կաթոլիկներն ոգտվում են Ուկրայինայի մեր թշնամիներից։ Ուկրայինցիներ կան, վոր խոսում են լեհերեն ու կաթոլիկություն են դավանում։ Բելոռուսիայում մենք նույն պատկերն ենք տեսնում, կայոնձներն աշխատում են կրոնական հարցերին ազգային հարցի բնույթ տալ։ Նրանք ճիգ ու ջանք

են թափում, վորպեսզի բնակչությունը, վոր կաթոլիկություն է դավանում, բայց խոսում է ուկրայիներեն,—լեհական դպրոց ունենա ու խոսի լեհերեն։ Դա արվում է բնակչության մեջ խորություն ցանելու դիտավորությամբ։ Ցավալին այն է, վոր ուկրայինցի ընկերները, վորոնք հարմարվում են՝ որինակ՝ ինքնահեծան յեկեղեցու (ավտոկեֆալ, ինքնագլուխ) դեմ պայքարելու պայմաններին, չեն հարմարվում հակակաթոլիկական պայքարի պայմաններին։ Չկա վոչ համապատասխան գրականություն, վոչ էլ աշխատողների կադրեր։ Բելոռուսիայում կռիվ են մղում ուղղափառության դեմ, բայց կաթոլիկության դեմ չեն մղում։ Կան գերմանացի-կաթոլիկներ, հայ-կաթոլիկներ և այլն, հարյուր հազարավոր մարդիկ իրենց ազգային կազմին անհամապատասխան այլ կրոն են դավանում և մեր ազդեցության շրջանից դուրս են մնում, վորովհետև անասվածները նրանց մեջ գրեթե չեն աշխատում։ Մեր համագումարը ցուցումներ պիտի տա, վորպեսզի հակակաթոլիկյան աշխատանքը տարվի վոչ միայն լեհերի վերաբերմամբ, այլև կաթոլիկության հետ կապված մյուս ազգությունների նկատմամբ։ Խնդրի հիմնական մոմենտը կրոնական ու ազգային հարցերի տարբերության ըմբռնման մեջ է կայանում։ Մեկը կարող է կաթոլիկ լինել, բայց դա չի նշանակում, վոր նա անպայման լեհ պիտի լինի։ Այդ կուլտուրական աշխատանքը

են, որոնց ռուսացումը նշանավոր չափով բռնիորեն է կատարվել։ Այդ հալածանքներից հետո տեղի չէ ունեցել վերադարձ դեպի հին ձևերը։ Քրիստոնեությունը կռապաշտությունից վոչնչով չի զանազանվում, դա միևնույն տեսակի պտուղ է, բայց դա չի նշանակում, որ մենք հաշվաթող պիտի անենք մեզ վիճակված հավելյալ դժվարությունները։ Յեթե մենք մերկացնում ենք ուղղափառության գործելակերպը, չպետք է արհամարհենք հեթանոսական մնացորդների առանձնահատկությունները, որովհետև այդ արհամարհանքի հետևանքով ուժեղանում է կրոնի հեթանոսական կողմը։ Կռապաշտական տարրերի մերկացումն, իբրև կրոնական նույնանիշ արտահայտություն ների, որոնք սկիզբն են առնում կուլտային տարրերի ու մեր դասակարգային թշնամիների բանակից, հարկավոր է հատկապես ընդգծել, առաջ քաշել։

Կարծում եմ որ այն հիմնական մոմենտները, որոնք տեղի ունեն Անաստվածների Միության ընդհանուր աշխատանքում, հիմնական կետերում յերևան են գալիս նաև զանազան ազգությունների մեջ տարվող աշխատանքի ընթացքում։ Այդ պատճառով էլ նրանք մեր կողմից ընդունվում են, բայց միքանի հավելումներով։

Հակակրոնական աշխատանքն ազգությունների մեջ կապված է զանազան ժողովուրդների հետ, որոնք ապրում են իրենց առանձնահատկություններն ունեցող

զանազան հանրապետություններում։ Այստեղ յերբեմն աշխատանքը տարվում է առանց ներքին կապի, առանց հաշվի առնելու այն նվաճումները, որ տալիս է աշխատանքն առանձին հանրապետություններում։ Յեռանդի ու հնարավորությունների ոգտագործման տեսակետից մենք շատ վերադրյալ ծախքեր ունենք։ Կենտրոնացման հարցը մեծ դեր է կատարում։ Համազումարի այն վճիռները, որոնք պիտի լինեն այդ առթիվ, ըստ ամենայնի կարող են գործադրվել մեր ազգությունների նկատմամբ։ Յետամնաց ժողովուրդների թիվը տասնյակ միլիոնների յե հասնում։ Դա դժվարին մարտահրավեր է, որովհետև այստեղ մենք ավելի խոշոր դժվարությունների յենք հանդիպում, քան՝ կենտրոնում։ Մենք պետք է ոգնենք այն ընկերներին, որոնք աշխատում են յետամնաց ժողովուրդների մեջ։ Անաստվածների Միությունը պիտի ուժեղացնի՝ Ազգությունների մեջ աշխատանք տանող բաժնի գործունեությունը։ Այդ բաժինն ավելի կենսունակ, ճկուն պիտի դառնա, ավելի շատ նյութ պիտի տա թերթերին կենդանի կապ ունենա շրջանների հետ, զրականություն ունենա, կադրեր պատրաստի և հմուտ գործիչներ պատրաստելու համար՝ կենտրոնում դասընթացներ ստեղծի ամբողջ ազգային մարտահրավերում աշխատելու նպատակով։

БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ЛЕНИНА

ՊԱՀԱՆՋԵՑԵՔ

Ի. ՍՏԱԼԻՆ
ՄԵԾ ԲԵԿՄԱՆ ՏԱՐԻՆ
64 եջ, գինը 5 կ.

Ի. ՍՏԱԼԻՆ
ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑ
264 եջ, 1 ռ. 60 կ.

Ի. ՍՏԱԼԻՆ
ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՀԱՐՑ
112 եջ, 50 կ.

Ի. ՍՏԱԼԻՆ
(Հիսնամյակի առթիվ)

Ի. ՍՏԱԼԻՆ
ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ
8 կոպ.

Ֆ. ԵՆԳԵԼՍ
ԿՈՄՈՒՆԻԶՄԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ
12 կոպ.

ՊԱՐԻԶԻ ԿՈՄՈՒՆԱՆ
15 կոպ.

ԼԵՆԻՆ
ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
160 եջ, 40 կ.

ԼԵՆԻՆ
ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍԻՆ
376 եջ, 95 կ.

ԼԵՆԻՆ
ԻՆՉ ԱՆԵԼ
224 եջ, 65 կ.

ԼԵՆԻՆ
ՄԻ ՔԱՅԼ ԱՌԱՋ, ՅԵՐԿՈՒ ՔԱՅԼ ՅԵՏ
278 եջ, 70 կ.

ԼԵՆԻՆԻ
ՊԱՏԳԱՄՆԵՐԸ ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ
15 կոպ.

ԼԵՆԻՆԻ
ՊԱՏԳԱՄՆԵՐԸ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
20 կոպ.

ԵՐԴԵ
1905 Թ.
50 կոպ.

ՀԱՄԱՏԱՐԱԾ ԿՈԼԵԿՏԻՎԱՑՈՒՄԸ ՅԵՎ
ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՆՈՐ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ
10 կոպ.

ԲԻՑԵՆԿՈ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՅԵՎ
ԿՆՈՋ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԿՈԼԽՈԶՆԵՐՈՒՄ
8 կոպ.

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԵԼԻ ՈՐԻՆԱԿԵԼԻ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ
2 կոպ.

ԻՆՉՊԵՍ ԵՆ ԱՇԽԱՏՈՒՄ ՀԱՐ-
ՎԱԾԱՅԻՆ ԲՐԻԳԱԴՆԵՐԸ
12 կոպ.

Վ. ՄՈԼՈՏՈՎ
ԿՈԼԽՈԶԱՅԻՆ ՇԱՐԺՄԱՆ ՄԱՍԻՆ
15 կոպ.

Կ ԿԻՆԴԵՑԵՎ
ԿՈԼԽՈԶԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՀՐԱՏԱՊ ԽՆԴԻՐՆԵՐԸ
15 կոպ.

8 ԿՈՊ.

15921

С. М. ДИМАНШТЕЙН

Антирелигиозная работа среди национальностей

На армянском языке

ЦЕНТРАЛЬНОЕ ИЗДАТЕЛЬСТВО НАРОДОВ СССР
Москва, центр, Никольская, 10